

Վ. Աստղիբաբյան

ՄԻ ԷՁ
ՆԱՅԱՍՏԱՆԻ
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ՇԱԲՈՒՄՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT



1955
1956
1957
1958
1959
1960
1961
1962
1963
1964
1965
1966
1967
1968
1969
1970
1971
1972
1973
1974
1975
1976
1977
1978
1979
1980
1981
1982
1983
1984
1985
1986
1987
1988
1989
1990
1991
1992
1993
1994
1995
1996
1997
1998
1999
2000
2001
2002
2003
2004
2005
2006
2007
2008
2009
2010
2011
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022
2023
2024
2025

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

В. АВЕТИСЯН

СТРАНИЦА ИЗ ИСТОРИИ
РАБОЧЕГО ДВИЖЕНИЯ
В АРМЕНИИ

(1896—1900)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1961

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

331.88(47.925)(09)

Ա


Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԻ ԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(1896—1900)

A $\frac{II}{14772}$

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐՈՎԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1968



Տ ա յ ա գ Ր Վ ու մ է
Հայկական ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ

Քրոշյուրը վեր է հանում 1896—1900 թվական-
ներին Ռիֆլիս—Կարս, Ալեքսանդրապոլ—Նրևան եր-
կաթուղու շինարարության վրա աշխատող բանվոր-
ների պայքարը Երկաթուղային վարչության ու կա-
պալառուների կամայականությունների և անլուր շա-
հադործման դեմ:

ՄԻ ԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ

Մեր պատմական գրականության մեջ բավական լուսարանվել են Հայաստանում 1903 թվականից հետո տեղի ունեցած բանվորական շարժումները, հատկապես 1905—1907 թվականների գործադուլները Ալավերդու և Ղափանի պղնձահանքերում ու գործարաններում, Երեւանի, Ալեքսանդրապոլի, Կարսի ձեռնարկություններում, երկաթուղում: Մինչդեռ բանվորական շարժումը Հայաստանում ավելի վաղ ծագում ունի: Արիսիվային նյութերի և ժամանակի մամուլի ուսումնասիրությունը պարզում է նոր, հետաքրքիր էջեր բանվորական շարժումների մասին, որ տեղի են ունեցել Հայաստանում անցյալ դարի վերջերին, առանձնապես Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարությունում: XIX դարի 90-ական թվականներին Հայաստանի բանվորության ամենաստվար բանակը հենց այդ շինարարության աշխատողներն էին, որոնց կյանքն ու պայքարն են լուսարանում ներկա բրոշյուրում հրատարակվող նյութերը:

Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարության բանվորների վիճակի, նրանց աշխատանքային պայմանների, բանվորական հուզումների մասին նյութերը հիմնականում քաղում ենք Հայկական ՍՍՌ Կենտրոնական Պե-

տական պատմական արխիվի (ԿՊՊԱ) 270 ֆոնդի (Թիֆ-լիս—Կարս երկաթուղու կառուցման 3-րդ տեղամասի աշխատանքների պետ), 271 ֆոնդի (Թիֆլիս—Կարս երկաթուղու կառուցման 4-րդ տեղամասի աշխատանքների պետ), Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ-ի 311, 312, 313 ֆոնդերի (Թիֆլիս—Կարս երկաթուղու կառուցման աշխատանքների պետեր) գործերից և նույն արխիվի 39 ֆոնդի (Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետ) № 126 գործից:

Հետաքրքրող հարցի վերաբերյալ բավական նյութեր կան այն տարիներին Անդրկովկասում լույս տեսնող պատրերական մամուլի որոշ օրգաններում:

Պետք է նշել, որ Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարության վրա աշխատողների կազմում եղել են ռևոլյուցիոնորեն տրամադրված առանձին բանվորներ, ինժեներներ ու տեխնիկներ, և նույնիսկ սոցիալ-դեմոկրատներ, որոնք աշխատել են հնարավորին շափ մամուլում երևան հանել բանվորների ծանր դրուժյունը, նրանց նկատմամբ երկաթուղու վարչության ու կապալառուների գործադրած ճնշումներն ու անմարդկային շահագործման փաստերը, և հասարակության ուշադրությունը դրավել դեպի բանվորական հարցը: Այդ կարգի մի շարք հոդվածներ 90-ական թվականների վերջերում տպագրվեցին Թիֆլիսում հրատարակվող «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լիբերալ թերթում, որին սոցիալ-դեմոկրատներից երբեմն թղթակցում էին Ի. Լուչինը, Ն. Կոզերենկոն, Գ. Ֆրանչեսկին:

Երկաթուղային շինարարության բանվորների արյունը ծծող տգրուկներից մեկի արարքները մերկացրեց նարոգնիկ գրող-ժուռնալիստ Ի. Իվանովիչը (Սվեդենովը)

«Новое Обозрение» թերթի 1898 թվականի մարտի 11-ի համարում տպագրած իր «Կիրտավան և ընկ.» ֆելիետոնում: Այդ թերթի 1897 թվականի մայիսի 13-ի համարում առաջին անգամ տպագրվեց Հովհաննես Թումանյանի «Նախօրյակին» («Накануне») ակնարկը, որի մեջ մեծ զրոզը վարպետությամբ նկարագրում է երկաթուղու շինարարությունը և ուռու ձորերում, գյուղացիների վերարերմունքը պեպի իրենց հին, նահապետական կյանքը հեղաշրջող այդ նորամուծությունը բանվորների վիճակը: «Նախօրյակին» ակնարկը թարգմանված էր հնդինակի ձևազրից:

Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարության վրա աշխատող բանվորների անլուր շահագործման մասին հարուստ փաստեր են հաղորդում և այն մի քանի հոդվածները, որ տպվել են «Новое Обозрение» թերթի 1896 թվականի համարներում և կրում են «Կ.» ստորագրությունը:

Պետք է ենթադրել, որ «Կ.» ստորագրությունը կրող այդ հոդվածների հեղինակը ինժեներ Օ. Ա. Կոզանն է (Օ. Ա. Երմանակի), որը, ավարտելով Յյուրիխի պոլիտեխնիկումը, 1895 թվականին վերադարձել էր Ռուսաստան ու աշխատանքի ընդունվել Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարությունում:

Օ. Ա. Կոզանը դեռ արտասահմանում ուսանելիս հարել էր մարքսիզմին, դարձել էր ռուսական սոցիալ-դեմոկրատական արտասահմանյան կազմակերպության անդամ և վերադառնալով Թիֆլիս Ֆ. Աֆանասևի, Ն. Կոզերենկոյի, Գ. Ֆրանչեսկու, Ն. Պոլետակի, Ս. Ալիլուևի հետ որոշակի դեր կատարեց Անդրկովկասում մարքսիզմի տարածման, բանվորական սոցիալ-դեմոկրատական

խմբակների կազմակերպման գործում¹։ Սկզբում Կոդանը աշխատում էր Թիֆլիս—Կարս կռիվաթուղու կառուցման տեխնիկական բաժնում, իսկ հետո փոխադրվեց շինարարության երկրորդ անդամաւոր, որի գրասենյակը գտնվում էր Բորչալուի գավառի Ախթալա գյուղում (այժմ Հայկական ՍՍՌ Նոյեմբերյանի շրջան)։ Նա հենց Ախթալայում էլ բնակվում էր²։ 1896 թվականի փետրբարից Կոդանի վրա սահմանված էր ոստիկանական գաղտնի հսկողություն³։ Նրա բնակարանում 1897—1898 թվականներին ոստիկանությունը մի քանի անգամ խուզարկություն կատարեց։ Խուզարկություններից մեկի ժամանակ, Ախթալայում, նրա մոտ հայտաբերվեց ականավոր ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատ Վիկտոր Կուսնատովսկու համակը՝ գրված սիրիբի աքսորից⁴։

Աշխատելով որպես տեխնիկ, Կոդանին շատ լավ հայտնի էր երկաթուղու կառուցման վրա աշխատող բանվորների վիճակը և սահասարակ այդ շինարարությունում տիրող դրությունը՝ իր մանրամասնություններով։ Այդ հիմք է տալիս ենթադրելու, որ «НОВОЕ ОБОЗРЕНИЕ» թերթի «К.» ստորագրությամբ հոդվածների հեղինակը Կոդանն է։ Բացի այդ, ինքը՝ Կոդանը ևս վկա-

¹ Օ. Ա. Կոդանը 1903 թ. հարեց մենշևիկներին, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մենշևիկ-ինտերնացիոնալիստ էր։ Մենշևիկյան պարտիայից դուրս է եկել 1921 թ., 1920 թ. ընտրվել է Մոսկվայի Սովետի անդամ։ Եղել է հասարակական և գիտական աշխատանքներում։ 1934 թվականից՝ անհաստիական թռչակառու։

² Տես Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 313, դ. 3, թ. 183։

³ Նույն տեղում, ֆ. 7, դ. 147, թ. 31։

⁴ Տես Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, դ. 166, թ. 357։

յում է, որ իրոք, 1896—1897 թվականներին թղթակցել է վերոհիշյալ թերթին: Այդ մասին իր հիշողություններում նա գրում է.

«Բանվորների համեմատաբար լայն շրջանների վրա գրական ազդեցությունը սահմանափակվում էր մի քանի հոդվածներով տեղական «Новое Обозрение» լեզալ թերթում: ...Հաջողվեց զետեղել հոդվածներ այն հարցերի մասին, որոնք հետաքրքրում էին մեր խմբակների հետ կապված բանվորների լայն շրջաններին»¹:

Բացի այստեղ նշվող արխիվային նյութերից և մամուլում լույս տեսած թղթակցություններից կան, անընդատ, նաև այլ նյութեր: Բայց առկա նյութերն էլ բավական են, որպեսզի որոշակի պատկերացում կազմենք Թիֆլիս—Կարս և ապա Ալեքսանդրապոլ—Սրևան իրկաթուղու շինարարության բանվորների վիճակի, նրանք պորձադուլային շարժումների ու հուզումների մասին, բանվորական հուզումներ, որոնք սյոռթկալով ընդարձակ շինարարության մերթ այս, մերթ այն տեղամասում, երբեմն ավարտվել են ցարական ստտիկանության հետ բանվորների արյունոտ ընդհարումներով:



XIX դարի հետոնֆորմյան շրջանը Ռուսաստանի պատմության մեջ նշանավորվեց կապիտալիզմի արագ զարգացումով, կապիտալիստական զարգացումից դուրս չմնաց նաև Անդրկովկասը: Այստեղ ևս սկսեց աճել արդյունաբերությունն ու առևտուրը: Կապիտալիստական արտադրության զարգացմանը մեծապես խթանեց երկա-

¹ О. А. Ерманский, Из пережитого, М.-Л., 1927, стр.

թուղային շինարարությունը: Ռազմաստրատեգիական և տնտեսական նկատումներով ցարական կառավարությունը XIX դարի երկրորդ կեսից սկսեց երկաթուղային լայն շինարարություն երկրի տարբեր մասերում: Երկաթուղային մի շարք գծեր կառուցվեցին Անդրկովկասում: 1872 թվականին ավարտվեց և շահագործման հանձնվեց Փոթի—Թիֆլիս երկաթգիծը: 1883 թվականին երկաթուղով Բաքուն միացվեց Թիֆլիսին և Բաթումին: Այս սլաքովոր մագիստրալից բացի կառուցվեցին երկաթուղային մի շարք այլ ճյուղեր:

1895 թվականին սկսվեց Թիֆլիս—Կարս, իսկ 1899 թվականին Ալեքսանդրապոլ—Երևան—Ջուլֆա երկաթուղու կառուցումը: Թիֆլիս—Կարս երկաթուղու կառուցումը նախատեսված էր ավարտել 1898 թվականի սկզբին, բայց իրականում այն շահագործման հանձնվեց 1899 թվականի դեկտեմբերին:

Երկաթուղու շինարարությունը զլխավորում էր «Թիֆլիս—Կարս երկաթուղու կառուցման վարչությունը», որի գրասենյակը գտնվում էր Թիֆլիսում: Ամբողջ շինարարությունը Թիֆլիսից մինչև Կարս (մոտ 300 կիլոմետր), բաժանված էր հինգ տեղամասի: Առաջին տեղամասը սկսվում էր Նավթլուղից և վերջանում Սադախլո կայարանում, երկրորդ տեղամասի գրասենյակը գտնվում էր Ախթալայում, երրորդ տեղամասինը՝ Մեծ Ղարաբիլիսայում (այժմ Կիրովական), չորրորդինը՝ Ալեքսանդրապոլում (Լենինական) և հինգերորդինը՝ Կարսում: Յուրաքանչյուր տեղամաս ուներ վարչության կողմից նշանակված պետ, ինժեներ աշխուհիներ, աշխատանքի հսկիչ-գործակալներ, տասնապետներ, սպահակներ, սպահետապետներ, հաշվային աշխատողներ, ճանապարհային վարպետներ, ավագ և վերանորոգող բանվորներ

(արդէն կառուցված գծերի համար) և այլն: Սրանք բոլորը իրենց վարձատրութիւնը ստանում էին Երկաթուղու կառուցման վարչութիւնից, համարվում էին պետական աշխատողներ: Այսպես, օրինակ, 4-րդ տեղամասում 1899 թվականի ապրիլին հաստիքով կային 64 աշխատող, որոնցից 10-ը տասնապետ, 22 գծային վերանորոգող բանվոր, 22 պահակ¹:

Երկաթուղու շինարարութիւնը կատարվում էր տնտեսական եղանակով. հողաչին, քարային և շինարարական մնացած բոլոր աշխատանքները ինչպես նաև նյութերի հայթայթումը և բանվորական ձեռքերի հավաքագրումը Երկաթուղու կառուցման վարչութեան կողմից պայմանագրով հանձնված էր կոնտրազենտներին, այլ կերպ ասած, կապալառուներին և ենթակապալառուներին (ПОДРЯДЧИКИ И РЯДЧИКИ): Կոնտրազենտներն աշխատանքի անմիջական պատվերը ստանում էին տեղամասերի պետերից և գտնվում էին նրանց հսկողութեան տակ: Երկաթուղու կառուցման ամբողջ աշխատանքը կատարում էին այն հազարավոր բանվորները, որոնց վարձում էին խոշոր ու մանր կապալառուները: Բանվորների թիվը՝ ամբողջ գծի վրա «Մշակ» թերթի թղթակցի տվյալներով 1896 թվականին հասնում էր մոտ 10000-ի²:

Այդ բանվորները եկել էին ինչպես երկաթուղու շինարարութեան շրջանում գտնվող գյուղերից, այնպես էլ Ռուսաստանի ներքին նահանգներից և արտասահմանից: Հայեր, վրացիներ, ռուսներ, ադրեկացիներ, լեզգիներ, ուկրաինացիներ, թուրքեր, պարսիկներ, ասորիներ, հույ-

¹ Տես Հայկական ՍՍՌ-ի ԿՊՊԱ, ֆ. 271, դ. 19, թ. 358—359:

² «Մշակ», 1896, № 90, (Բանվորների թիվը ըստ երևույթին չափազանցված է, բայց տալիս է մոտավոր պատկերացում):

ներ, իտալացիներ, լեհեր, շեխեր—ահա՛ թիֆլիս—Կարս։
Երկաթուղու շինարարութեան բանվորութեան ոչ լրիւ
թվարկած ազգային կազմը։ Ռուս, վրացի և հայ
բանվորների մի որոշ մասն ունեւ Ռուսաստանում և
Անգրկովկասում կառուցված երկաթուղիների վրա աշ-
խատանքի փորձ։ Բավական հայ բանվորներ կային
Արևմտյան Հայաստանից, մեծ մասամբ գյուղացիներ,
որոնք 1894—1895 թվականների կոտորածներից ապաս-
տան էին գտել Երևանի նահանգում և Կարսի մարզում։
Իտալացի բանվորները մեծ մասամբ աշխատում էին
թունելների շինարարութեան վրա։ Կային շատ հույն
վարպետներ։

Գրանց բոլորին, այստեղ՝ Լուովա անդնդախոր ձո-
րերն ու Շիրակի բարձրավանդակն էր բերել անհուն կա-
րիքն ու չբավորութունը, աշխատանք գտնելու և առժա-
մանակ իրենց ու հայրենիքում թողած ընտանիքների
գոյութունը պահպանելու հույսը։

Երկաթուղային շինարարութեան այդ տասնյակ-հա-
զար բազմադդ ու բազմալիզու բանվորութունը աշխա-
տում էր և ապրում չափազանց ծանր պայմաններում։
ամենավայրենի շահագործման ենթարկվում ազմինիս-
տրացիայի, իրենց անմիջական վարձակալ երկաթուղա-
յին տղրուկ՝ կապալառուների և այսպես կոչված ոչադ-
չիկների կողմից։ Աշխատանքի կապալային սիստեմը
մեծ հնարավորութուն էր տալիս կապալատալ ունեցողնե-
րին կարճ ժամանակամիջոցում այն կրկնապատկել ու
եռապատկել բանվորների արյուն-քրտինքի հաշվին։ Դա
հնարավոր էր մանավանդ այն պատճառով, որ բանվո-
րական ուժն այստեղ շատ էժան էր գնահատվում։ Ահա
թե ինչու երբ սկսվեց երկաթուղու կառուցումը համեղ
պատառի հոտն առած անդղների պիտ թիֆլիս—Կարս.

երկաթուղին թափվեցին մեծ ու փոքր մասշտաբի բազմաթիվ դրամատերեր՝ կապալաներ վերցնելու համար: Քրանց մեջ կային հայ վաճառականներ, վրացի իշխաններ, ադրբեջանական բեկեր, ռուս կուլակներ, ֆրանսիացի, իտալացի, անգլիացի, գերմանացի, ռումինացի և այլ ու այլ աղղղության սլատկանոց տարբեր երկրներից և կաթ կապալառու-վաճառականներ՝ Դեմոստի, Բաեխշ, Բելուրարոզով, Ֆոնտան, Մասլով, Նովիկայտիս, Կաստիլ, Ասլանիզի, Կիլրլոկ, Անդրեոլետտի, Սենդո, Ռոտշիլդ, Գինզբուրգ, Մեյեր, Կինսբրուններ, Ալմազով, Քաֆայիլով, Դոլիձե, Լյուբլինսկի — ահա՛ այդ կապալառուներից մի քանիսի անունները:

Օգտվելով այն հանգամանքից, որ, ինչպես նշեցինք, տնտեսապես քայքայված հազարավոր գյուղացիներ ու արհեստավորներ գործ գտնելու, սովից շմեռնելու համար եկել, թափվել էին երկաթգիծ, կապալառուները և շինարարության վարչությունը ամենաշնչին վարձով քշխատեցնում էին նրանց, թույլ տալիս ամեն տեսակ կամայականություններ:

Բանվորների մի մասն աշխատում էր օրավարձով, մի մասն էլ՝ գործավարձով: Ինչպես օրավարձով, այնպես էլ գործավարձով աշխատողները իրականում չէին ստանում նույնիսկ այն շնչին գրոշները, որ սլաճամանավորվում էին նրանց վճարել կապալառուները:

Օրավարձով աշխատողները ստանում էին 50—70 կոպեկ: Բայց սովորաբար դրա զգալի մասը բանվորի ձեռքը չէր ընկնում, որովհետև դրանից իրենց բաժինն էին հանում կապալառուն և նրա գործակալները՝ ոչադչիկները:

«Новое Обозрение» թերթի թղթակիցը ահա թե ինչպես է նկարագրում գործի կազմակերպման կապա-

լային սիստեմը և բանվորների վարձատրման կարգը Թիֆլիս—կարս երկաթուղում:

«Գործը հանձնվում է կոնտրադենտին: Կոնտրադենտն իր օգտին հատկացնելով համապատասխան տոկոսներ, սովորաբար 20-ից մինչև 40-ը, գործը հանձնում է այսպես կոչված ոչադչիկին: Վերջինս էլ իրեն բաժին վերցնելով համապատասխան տոկոս, գործը հանձնում է սերիշ ոչադչիկի, որն իր հերթին նույնն է անում: Այդպիսով բանվորները վարձվում են 6-րդ ու 7-րդ ձևերով և նրանց բաժին է մնում հազիվհազ 10—15 կոպեկ կոնտրադենտի հետ պայմանավորված ռուբլուց»¹:

Մանր և ոտոչակի մասնագիտություն պահանջող աշխատանքները կապալառուները հանձնում էին բանվորական արտիկներին կամ խմբերին՝ գործավարձով: Այս դեպքում ևս առյուծի բաժինը վերցնում էին կապալառուն և ոչադչիկները: Ահա մի քանի տվյալներ կապալառուների ու բանվորների վաստակների հարաբերության մասին՝ գործավարձով կատարվող աշխատանքներում:

Սովորական գրունտի 1 խորանարդ սաժենը² փորելու համար կապալառուները ստանում էին 2 ու 50 կ., իսկ բանվորներին վճարում էին 1 ու 30 կ. մինչև 1 ու 50 կ., ժայռոտ գրունտի 1 խորանարդ սաժեն փորվածքի համար 8 ու., և 13 ու 50 կ. (միջին հաշվով 10 ու 50 կ.), իսկ բանվորներին վճարում էին 6 ու 6 ու 50 կ., 1 խորանարդ սաժեն որմնաքարի համար ստանում էին 15 ռուբլի, վճարում 7 ու կամ 7 ու 50 կ.:

¹ «Новое Обозрение», 23 ապրիլի, 1896, «Из Борчалпнского уезда»:

² Մեկ սաժենը 2,14 մետր է:

Մեկ խորանարդ սաժեն խրամատ փորելու համար սովորական գրունտում 2 ո., իսկ բանվորներին վճարում էին 1 ո. 30 կ., իսկ հաճախ էլ օրավարձով էին հաշվում 60—70 կոպեկ, 1 խորանարդ սաժեն ավազի համար՝ 20 ո., բանվորներին վճարում էին 10—12 ո., և այդպես մնացած բոլոր աշխատանքներում կապալառուների և ոյադչիկների եկամուտը հասնում էր այն գումարի $\frac{1}{4}$ -ին կամ կեսին, որն ընդհանրապես վճարում էր երկաթուղու կառուցման վարչությունը աշխատանքների և նյութերի համար: Ընդհանուր առմամբ կապալառուի եկամուտը կազմում էր կապալի ամբողջ գումարի առնվազն 20 տոկոսը¹:

Բարվոր վիճակում շէին և այն ոչ մեծ թիվ կազմող մասնագետ, որակավորում ունեցող բանվորները, որոնք համեմատաբար ավելի բարձր վարձատրություն էին ստանում: Սրանք էլ ինժեներների և կապալառուների կողմից գծագրերը, շինանյութերը և այլ պարագաները ժամանակին չհայթայթելու պատճառով հաճախ հարկադրված էին լինում օրերով մնալ անգործ, առանց վարձատրության և այդ շրջանում ծախսել մինչև այդ վաստակած գումարը:

Կապալառուները, ոյադչիկները, աշխղեկներն ու տասնապետները բանվորներին, մանավանդ անգրագետ, կողոպտում էին նրանց կատարած աշխատանքը լրիվ չհաշվարկելու միջոցով:

Պետական բանվորները նույնպես շատ շնչին աշխատավարձ էին ստանում: Ավագ բանվորը, օրինակ, ստանում էր ամսական 30 ռուբլի, գծի վերանորոգող բանվոր

¹ Տե՛ս «Новое Обозрение», 22 հունիսի, 1896, «На работах: по постройке Карсской дороги». ստորագրությունը՝ Կ.

ըր՝ 18 ուրբլի: Ամսական 18 ուրբլի էին ստանում նաև գծի պահակները: Մինչդեռ տեղամասի պետերը ամսական ստանում էին 500—600 ուրբլի, ինժեներ-աշխուհիները 300—350 ուրբլի¹: Բացի աշխատավարձի այն հսկայական առավելությունից շինարարության ղեկավար կազմը ուներ նաև բազմաթիվ արտոնություններ և անաշխատ եկամտի այլ աղբյուրներ:

Կապալառուներն ու ոյադչիկները բանվորների հաշվին հարստանալու ուրիշ միջոց էլ ունեին. դա «կամավոր նվիրատվություններն» էին, որ բանվորները պետք է յուրաքանչյուր անգամ աշխատավարձ ստանալիս կատարեին հօգուտ ոյադչիկի: Այդ պայմանով էին սովորաբար ոյադչիկները բանվորներին աշխատանքի ընդունում: Եթե որևէ բանվոր հրաժարվեր իր աշխատավարձից ոյադչիկին համապատասխան բաժին հանելուց, նա միզրկվեր աշխատանքից, կընկներ ոյադչիկի «սև ցուցակում» և այլևս ամբողջ գծի վրա ոչ մի տեղ աշխատանքի չէր ընդունվի: Այդ հարցում ոյադչիկների միջև կար «լիակատար փոխըմբռնում» և համագործակցություն:

Կաշառակեր կապալառուներին ու նրանց ոյադչիկներին պաշտպանում էին տեղամասի պետերը (համապատասխան հատուցում ստանալով իհարկե) և Երկաթուղու շինարարության վարչությունը: Հայտնի են դեպքեր, երբ տեղամասի պետերը ոչ միայն խոչընդոտ չեն հանդիսացել ոյադչիկներին բանվորներից «նվերներ» վերցնելու, այլև իրենք են խրախուսել կամ նույնիսկ առաջարկել բանվորներին այդ կատարելու: Այս հաստատվում է հետևյալ բնորոշ գրությունը, որն ուղարկել է 1897 թվականի դեկտեմբերի 10-ին Թիֆլիս—Կարս

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ-ի ԿՊՊԱ, ֆ. 271, դ. 129, ք. 302—306:

երկաթուղու կառուցման վարչութեան պետ՝ ինժեներ Վուրցելը շինարարութեան հինգերորդ տեղամասի պետին:

Սևվազ վերահսկիչ Ա. Ի. Յարովեցկին, — գրում էր Վուրցելը, — բանավոր ինձ հաղորդեց, որ ույադչիկ Կանդելակիի բանվորների հետ վերջնահաշիվ կատարելիս (վերահսկողութեան տեղական ներկայացուցչի ներկայութեամբ), հանձնաժողովին արած ձեր առաջարկութեամբ, բանվորներից, իրենց համաձայնութեամբ, գանձվեցին հնգական կոպեկ յուրաքանչյուր աշխատանքային օրվա դիմաց՝ հօգուտ ույադչիկ Կանդելակիի: Բացի այդ վերջնահաշիվ կատարող հանձնաժողովում ձեր կողմից դարձյալ առաջարկվել է բանվորներին նվիրատվություն կատարել բարեգործական նպատակով Կարսում կազմակերպվող տոնածառի համար¹:

Կապալառուների կաշառակերութեան մասին «НОВОЕ Обозрение» թերթի 1898 թվականի մարտի 11-ի համարում, ինչպես սկզբից նշեցինք, տպագրվեց Իվանովիչի՝ հոդվածը՝ «Կիրտավան և Բնկ.» վերնագրով: Այդ հոդվածում բերված էին ճշգրիտ փաստեր, թե ինչպես բանվորները աշխատավարձ ստանալիս սխտեմատիկաբար «բաժին» էին տալիս ույադչիկ Սեբաստիան Կիրտավային, շնայած վերջինս շարունակ նեղում էր ու ճնշում նրանց: Հոդվածագիրը նշում էր նաև, որ Կիրտավան բացառություն չէր կազմում երկաթուղում, որ նման ձևով էին գործում բոլոր ույադչիկները: «Բանվորներին պակաս վճարելը, — գրում էր Իվանովիչը, — պատահական երևույթ չէ, այլ խրոնիկական: ... Ույադչիկին կաշառք

¹ Վրացական ՍՍՌ ԿԳՊԱ, ֆ. 313, ք. 5, թ. 183:

A II
14772



չսովորող բանվորը չի կարող աշխատանք ստանալ ամբողջ գծի վրա»¹։

Չնայած մամուլում Կիրատավայրի մերկացմանը և երկաթուղու երկու ինժեներներին կողմից նրան դատի հանձնելուն, Կիրատավան ոչ մի պատիժ չկրեց։ Վարչությունը ինչպես միշտ, կանգնեց ոչադչիկի թիկունքում, իսկ այն երկու ինժեներները իրենց համարձակության համար խիստ տուժեցին։ Նրանք աշխատանքի փոխադրվեցին այլ վայր²։

Սովորական երևույթ էր նաև բանվորներին ամիսնե-րով աշխատավարձ չվճարելը։ Կապալառուներն ու շինարարության ադմինիստրացիան հանցավոր անտարբերություն էին ցուցաբերում բանվորների օրինական պահանջների նկատմամբ։ Հաճախ նույնիսկ բանվորական արտեղները 6—7 ամիս փող չէին ստանում և բանվորները բազմաթիվ բողոքներից հետո ոչ մի արդյունքի չհասնելով, հարկադրված էին լինում առանց վերջնահաշիվ ստանալու հեռանալ հայրենիք։

«Ահա ամբողջ արտելով մի որոշ աշխատանք է կատարված,— պատմում է «Новое Обозрение» թերթի մի թղթակից,— և հարկավոր է վճարել։ Դիմում են անմիջական վարձակալին, բայց նա վճռականորեն մերժում է պատճառաբանելով, որ ինքը դեռ փող չի ստացել և ուղարկում է մյուս կապալառուի մոտ։ Նա իր հերթին հրաժարվում է վճարել, հայտարարելով, որ իր հաշիվն էլ դեռ չեն փակել... դորժը հասնում է սկզբնական գրվածքի կոնտրադենտին. սա արդեն բողոքարկման

¹ «Новое Обозрение», 11 մարտի, 1898.

² «Новое Обозрение», 8 սեպտեմբերի, 1899. «По новому дороге» ֆելիետոնը։

բարձրագույն ատյանն է: Բայց այստեղ էլ դործը չի վճուվում բանվորների օգտին...: Վերջին հույսը՝ Երկաթուղու կառուցման վարչությունն է. և ահա բանվորները հարյուրներով ուղևորվում են Թիֆլիս գանգատ տալու: Բայց վարչությունն էլ նրանց ջիշ է օգնում: ...Շատերն ի վիճակի չլինելով սպասելու նրա կարգադրության արդյունքներին, մեկնում են առանց իրենց հասանելիքը ստանալու»¹:

Լինում էին դեպքեր, երբ բանվորներին մի քանի ամիս աշխատեցնելուց հետո կապալառուները դիմում էին փախուսալի՝ յուրացնելով բանվորների ամբողջ աշխատավարձը: Երկաթուղու վարչությունը հրաժարվում էր, իհարկե, հատուցելու բանվորներին՝ առաջարկելով նրանց նման դեպքերում դիմելու գատարանին, ոստիկանությանը: Բայց դրանից էլ ոչինչ գուրս չէր գալիս, որովհետև բանվորները ոչ ժամանակ և հնարավորություն ունեին ամիսներ սպասելու մինչև կապալառուն հայտնաբերվեր ու դատի տրվեր, ոչ էլ հույս ունեին թե գատարանի վճիռը իրենց օգտին կլիներ: Փախուստի դիմած կապալառուն պատասխանատվությունից չէր վախենում, որովհետև համոզված էր, որ Երկաթուղու վարչությունն իրեն չէր հետապնդի քրեական պատասխանատվության ենթարկելու համար, իսկ դատի դեպքում էլ դրամի միջոցով նա կարող էր պաշտպանվել և գատավճիռը կլիներ ոչ թե իր դեմ ուղղված, այլ գանգատավոր բանվորների:

«Նշված բնույթի չարաշահումները, — գրում էր Իվանովիչը, — սովորական երևույթ են և բանվորները ակամա դիմանում են, որպեսզի չընկնեն ավելի վատթար

¹ «Новое Обозрение», 23 ապրիլի, 1896, «Из Борчалинского уезда»:

դրութեան մեջ. ձեռնտու է զրկվել աշխատավարձի մի մասից, քան թե կորցնել աշխատանքի իրավունքը»¹:

Բանվորներին թալանում էին նաև այն բաղմամբիվ մեծ ու փոքր առևտրականները, որոնք հաստատվել էին երկաթգծի շինարարութեան շրջանում, բացել էին կրօպակներ, խորտկարաններ և օղետներ: Հաճախ այդ կրօպակների ու օղետների տերերը նույն կապալառուներն էին լինում և այդ միջոցով նույնպես շահույթներ էին կորզում: Օգտվելով այն հանգամանքից, որ բանվորները ամիսներով աշխատավարձ չէին ստանում, նրանք այդ փողազուրկ բանվորներին բարձր գներով ապառիկ մթերք էին բաց թողնում և ապա ամբողջ գումարը և տոկոսը գանձում էին վերջնահաշվի ժամանակ: Այնպես էր պատահում, որ բանվորը մինչև աշխատավարձ ստանալը այն արդեն ծախսած էր լինում կապալառուի կրօպակից ապառիկ գնումների վրա: Դա հնարավորութեամբ էր տալիս կապալառուներին հաստատելու առևտրի մենաշնորհ, հարկադրելու բանվորներին իրենց կրօպակներից գնումներ կատարել: Այդ և այլ պատճառներով կենսամթերքների գները երկաթուղու կառուցման շրջանում շատ ավելի բարձր էին, քան նույնիսկ Թիֆլիսում էր կամ մյուս քաղաքներում: Պարզ է, որ նման պայմաններում բանվորները օրական 14—16 ժամ, բառիս բուն նշանակութեամբ տաժանակիր և կյանքի համար վտանգավոր աշխատանք կատարելով, ոչ միայն չէին կարողանում որոշ գումար վաստակել իրենց ընտանիքներին օգնելու, կամ կուտակված պարտքերը վճարելու համար, այլև հաճախ չէին կարողանում նույնիսկ իրենց առօրյա սննդի նվազագույնը հայթայթելու:

¹ «Новое Обозрение», 11 մարտի, 1898:

Նրանք ապրում էին ժայրահեղ խնայողություն անելով,
կիսաքաղց վիճակում, աշխատում էին կիսամերկ ու
բոկոտան:



Չափազանց անմխիթար էին երկաթուղու շինարարության բանվորների կենցաղ-բնակարանային պայմանները: Հազարավոր բանվորներ ապրում էին շտապ կառուցված բարակներում, գետնախորշերում (ЗЕМЛЯНИКИ), կիսախարխուլ վրանների տակ կամ էլ բացօթյա: Ապրում էին խմբերով, իրար վրա կուտակված, առանց անկողնու, առանց թախտերի, խոնավ գետնի վրա, կեղտոտության ու գարշահոտության մեջ: Կուլտուրական սպասարկման, գրադարան-ընթերցարանների մասին խոսք անգամ չի կարող լինել:

Չի կարելի առանց հուզմունքի կարդալ բանվորների կենցաղային պայմանների մասին ժամանակակիցների թողած վկայությունները:

Ս.հա մի քանի փաստեր.

«Новое Обозрение» թերթում տպագրված Կ-ի հոդվածում մենք կարդում ենք.

«Բայց առանձնապես վատ են բանվորների կացարանները. դրանք մեծամասամբ լուսամուտից զուրկ, մեկ դռնով, երբեմն էլ առանց դռան, մի կլոր անցքով միայն մեծ դետնախորշեր են: Վեց արշին¹ լայնություն, 7 արշին երկարություն և 2¹/₂ արշին բարձրություն ունեցող այդ գետնախորշում տեղավորված են 10—12 մարդ: Լեռնոտ վայրերում կացարանները կառուցվում են քարից

¹ Մեկ արշինը 71,12 սանտիմետր է:

և այդ դեպքում նրանք ներսից մի քիչ բարձր են լինում: Իսկ ընդհանրապես քարի կացարաններում էլ նույնքան հարմարություններ ու մաքրություն կա, որքան գետնախորշերում: Ամռանը բանվորները հարմարավետ պառկում են դրսում, ձմեռը կամա թե ակամա հարկ է լինում իրար վրա կուտակվել գետնախորշերում և կարելի է պատկերացնել, թե ինչ վիճակ է տիրում այնտեղ այդ պահին...

Բանվորների կացարաններում հիգիենա չպահպանելու հետևանքով, ինչպես և աշխատանքի ծանրությունից ու այլ պատճառներով բանվորների մեջ շափաղանց շատ են մահացությունները. ձմռան ընթացքում շիրիմներ են գոյացել Ախթալայում, Ղարաքիլիսայում, Ջաջուռի մոտ և այլ վայրերում՝ շինարարության երկարությամբ¹:

Բանվորների բնակարանային պայմանների, նրանց սանիտարական վիճակի մասին մի շարք փաստեր իր ժամանակին հաղորդել են նաև տեղամասային բժիշկները, որոնց պարտականություններից մեկն էլ հանրակացարանների վրա հսկելն էր:

«1896 թվականի հուլիսի 4-ին և 5-ին, — հաղորդում է իր գեկուցագրի մեջ Յ-րդ տեղամասի բժիշկը, — ես ստուգեցի բանվորների բարակները, կրպակներն ու փոռերը Ղարաքիլիսայից մինչև Կամեն գծի երկարությունամբ: Ընդ սմին պարզվեց, որ բանվորների բարակները, կրպակներն ու փոռերը շատ տեղերում պահվում են վերին աստիճանի կեղտոտ, մանավանդ կապալառուներ Ասլանիդլի, Ֆոնտանի և Բանիչի մոտ:

Շատ տեղերում բանվորներն ապրում են իրար վրա թափված, խոնավ, վատ օդափոխվող, բնակվելու համար

¹ «Новое Обозрение», 22 հունիսի, 1896:

միանգամայն անսպասելիորեն դեմոկրատիզացում, որի հետևանքով վերջին ժամանակներս շատացել են բանվորների՝ տիֆով հիվանդանալու դեպքերը: Այսպես, օրինակ, հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը կապալառու Բանիգի բանվորներից հիվանդանոց են տարվել տիֆով հիվանդ յոթ հոգի, բոլորն էլ 123 վերստի վրա աշխատողների միևնույն պարտիայից: Այդ պարտիան բաղկացած է 100 հոգուց և նրանք բոլորն էլ ապրում են «դեմոկրատիզացում»¹:

Կացարաններում ծանր էր լինում մանավանդ անձրևային օրերին, առանձնապես աշնանը, երբ հորդառատ անձրևաջուրը լցվում էր դեմոկրատիզացում կամ չատ կառուցված վրանների ներսը: Վառարանների բացակայության պատճառով բանվորները սառչում էին, հնարավորություն չունեին թրջված շորերն անգամ չորացնելու: Երկաթուղու վարչութչյան գլխավոր բժիշկը 1895 թվականի սեպտեմբերին այդ մասին հարկադրված է եղել ահա թե ինչ արձանագրել:

«Բանվորների կացարանները մեծամասամբ բոլորովին չեն բավարարում տարվա ժամանակի պահանջներին, որովհետև բանվորների մեծ մասը տեղավորված է պատառոտված և չժածկվող վրաններում կամ բարակներում, որոնց վատ կառուցման հետևանքով բանվորները հնարավորություն չունեն պատսպարվելու ցրտից, բամուց ու անձրևներից»²:

Նույն թվականի նոյեմբերին 3-րդ տեղամասի բժիշկը գրում էր.

«Գծով շրջելիս ես նկատել եմ, որ շատ բարակներում,

¹ Հայկական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 270, գ. 4, թ. 255:

² Նույն տեղում, ֆ. 271, գ. 1, թ. 3:

որտեղ այժմ ապրում են բանվորները, շկան վառարաններ ու թախտեր»¹։

Բանվորների բնակարանային-կենցաղային անտանելի պայմանների մասին բժիշկների հաճախակի կազմած այս արձանագրություններն, իհարկե, ձևական բնույթ ունենին, որովհետև ոչ Երկաթուղու վարչությունը և ոչ էլ կապալառուները ոչ մի փորձ չէին անում փոխելու գոյություն ունեցող պայմանները։ Բժիշկների և բանվորների բոլոր ահազանգումները մնում էին անսպասասխան։

Շինարարությունում չափազանց վատ էր բժշկական օգնությունը։ Թեպետ բանվորների աշխատավարձի 1 տոկոսը պահվում էր բուժման ծախսերի համար, բայց բժշկական սպասարկում իսկական իմաստով գոյություն չուներ։ Տեղամասերում եղած բժիշկների և բուժակների փոքրաթիվ կազմը չէր կարողանում սպասարկել տասնյակ կիլոմետրերի վրա ցրված բանվորներին, մանավանդ որ բացակայում էին փոխադրական միջոցները, շկար դեղորայք։ Իսկ հիվանդությունները գծի վրա շատ-շատ էին։ Ամառվա շոգերին, երբ մոլեգնում էր ջերմախտը, բանվորները խինին և այլ անհրաժեշտ դեղերը ստիպված էին լինում իրենք ճարել՝ դնելով խանութպան-սպեկուլյանտներից։

Շուրավերից ուղարկված մի թղթակցության մեջ ահա թե ինչպես է նկարագրվում սանիտարա-բժշկական սպասարկման վիճակը երկաթուղու կառուցման 2-րդ տեղամասում.

«Բժշկական անձնակազմը,— գրում է թղթակիցը,— այստեղ բաղկացած է տեղամասի բժշկից և 4 բուժա-

¹ Հայկական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 270, գ. 4, թ. 69.

կից. վերջիններից մեկը ապրում է Սաղախլոյում, երկրորդը՝ տեղամասի ծայրում, իսկ տեղամասի բժիշկը և երկու բուժակները համարյա առանց տեղից շարժվելու գտնվում են Ախթալայում: Նկատի ունենալով, որ կառուցվող դժի վայրը, մոտ 100 վերստաշափ, վերին աստիճանի ջերմախտային է, որի հետևանքով հիվանդութունները բանվորների մեջ այստեղ շատ են, հարկ է, որ տեղամասի բժիշկը ավելի հաճախ մեկներ գիծը և բանվորներին տեղում օգնութուն ցույց տար և ոչ թե նրանց հրավիրեր Ախթալա: Ճիշտ է, բուժակը հիվանդներին իբր թե օգնութուն ցույց տալու համար երբեմն գիծ մեկնելով իր հետ վերցնում է նաև դեղորայք, բայց այնքան սահմանափակ քանակով, որ առաջին իսկ վերստի վրա ամբողջ դեղորայքը ծախսվում է: Դրա շնորհիվ խանութպաններից մեկը երկաթգծի սահմաններում նպարեղենի և քաղցրավենիի հետ միասին հաջող կերպով վաճառում է նաև խինին, խեղճ բանվորներից կորզելով անշափ մեծ գումար: Եթե նկատի ունենանք, որ երկաթգծում բժշկական օգնութունը բանվորներին ցույց է տրվում ոչ թե ձրի, այլ նրանց աշխատավարձի 1 տոկոսի դանձման դիմաց, ապա հասկանալի կլինի, որ բանվորների բողոքները բժշկական օգնության բացակայության մասին արդարացի են»¹:

Այդպես էր դրութունը նաև մյուս տեղամասերում:

Հիվանդութուններին շուտ էին ենթարկվում մանավանդ տեղական կլիմային անսովոր, Ռուսաստանից և Եվրոպայի երկրներից եկած բանվորները: Հիվանդների նկատմամբ կապալառուները և նրանց գործակատարները ցույց էին տալիս ամենաանհոգի վերաբերմունք:

¹ «Новое Обозрение», 1897, № 4770.

Նրանք նույնիսկ զլանում էին կազմակերպել հանրակացարաններում ընկած ծանր ու անխնամ հիվանդներին մարդավարի կերպով հիվանդանոց տեղափոխելը:

«Բազմաթիվ անգամ ես նկատել եմ, — գրում էր Յ-րդ տեղամասի բժիշկը տեղամասի պետին, — որ կապալառուները նույնիսկ ծանր հիվանդներին հիվանդանոց են ուղարկում կամ ոտքով կամ ձիով: Հիվանդները հաճախ հիվանդանոց են բերվում բուրբուխի տանջահար եղած և նույնիսկ գիտակցությունը կորցրած վիճակում»¹:

Բժշկական օգնության, խնամքի, դեղորայքի և սննդի պակասը, կացարանների հակասանիտարական վիճակը, ծանր աշխատանքն ու անսովոր կլիման, բանվորներից շատերին ֆիզիկապես ընկճում, գերեզմանի դուռն էր հասցնում: Մահացողներն այնքան շատ էին, որ 1896 թվականին Երևանի նահանգապետը հարց բարձրացրեց Կովկասի կառավարչապետի առաջ՝ դժի վրա մշտական աշխատանքի ուս քահանա հրավիրելու մասին՝ երկրի ներքին նահանգներից եկած մահացող բանվորներին ուղղափառ եկեղեցու ծեսերով լաղելու համար²:

Աշխատանքի պայմանները և անվտանգության ապահովության միջոցառումների համարյա բացակայությունը տեղիք էին տալիս նաև շատ դժբախտ դեպքերի, մանավանդ թունեղների կառուցման շրջանում: Պահպանված է 4-րդ տեղամասում 1897—1898 թվականներին տեղի ունեցած դժբախտ պատահարների դորժը: Այդ դորժից երևում է, որ 1897 թվականի փետրվարից մինչև 1898 թվականի փետրվարը արձանագրվել են 4-րդ տեղամասում աշխատանքի ժամանակ 36 բանվորների

¹ Հայկական ՍՍԻ ԿՊՊԱ, ֆ. 270, գ. 4, թ. 220:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 270, գ. 2, թ. 24:

հետ պատահած դեպքերը: Այդ բանվորներից 13-ը մահացել են տեղնուտեղը, կամ հիվանդանոց տանելու ճանապարհին¹: Դրանք մեծ մասամբ Զաջուռի թունելի կառուցման վրա, իտալացի կապալառու Զուվանի Անդրեոլիտտի մոտ աշխատող բանվորներն են: Կենդանի մնացածներից շատերն էլ այնպես էին խեղվել ու հաշմանդամ դարձել, որ աշխատանքի համար այլևս պիտանի չէին:

Պետք է նկատի ունենալ, որ արձանագրվում էին ոչ բոլոր դժբախտ դեպքերը. այդ ձևնտու չէր կապալառուներին և Երկաթուղու վարչությանը: Բարդություններից խուսափելու համար կապալառուները, ոչադշիկները, աշխղեկները շատ դեպքերի մասին չէին էլ հայտնում և չէին էլ արձանագրում:



Վերևում բերված փաստերից մենք տեսանք, թե ինչպիսի վայրի շահագործման էին ենթարկվում, ինչպիսի անմարդկային պայմաններում էին աշխատում ու ապրում երկաթուղու կառուցող բանվորները: Բանվորները երկար չէին կարող լուռ ու մունջ տանել շինարարության վարչության և կապալառուների շարաշահումներն ու կամայականությունները: Նրանք հաճախ իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում, այս կամ այն ձևով արտահայտում իրենց զայրույթն ու դժգոհությունը: Բանվորները դանդառններ էին ուղարկում նահանգապետին, նույնիսկ Կովկասի կառավարչապետին՝ կապալառուների կեղեքումների դեմ: Բայց այդ բողոքները մնում էին

¹ Տե՛ս Հայկական ՍՍԻ ԿՊՊԱ, ֆ. 271, գ. 16, թ. 1—235:

անհետևանք: Դեռ ավելին, իշխանությունները վախնալով բանվորների հնարավոր շարժումներից երկաթուղու տեղամասերը, կապալառուների դրասենյակները ամրապնդում էին ոստիկանական նոր ուժերով: Բանվորների վրա օր ու դիշեր հսկում էին զինված պահակները, ժանդարմները: Պահնորդական բաժանմունքները հոգ էին տանում, որ բանվորների շրջանում չթափանցեն ուղղուցիտն տարրեր, քաղաքական տեսակետից անբարեհույս համարվող աշխատողների նկատմամբ հաստատելով ոստիկանական դադտնի հսկողութուն: Այսպես, օրինակ, 1898 թվականի ժանդարմական մի գրությունից հայտնի է, որ Անդրկովկասյան և Կարս—Քիֆլիսյան երկաթուղու ծառայողների մի ամբողջ խումբ գտնվում էր դադտնի հսկողության տակ¹:

Բանվորների վրա առանձնապես ծանր էր անդրադառնում և նրանց մեջ արդարացի ցասում էր հարուցում աշխատավարձի ձգձգումները, որ, ինչպես նշեցինք, սովորական երևույթ էր դժամասում: Բանվորների համար գժվար էր սարգել, թե ով էր աշխատավարձի ձգձգումների կոնկրետ մեղավորը՝ շինարարության Վարչութունը, թե կապալառուն, որովհետև բանվորների ղաջրույթն իրենցից վանելու համար Վարչութունը մեղքը դրում էր կապալառուի վրա, իսկ վերջինս էլ Վարչության վրա: Եվ ահա շատ դեպքում իրենց աշխատատեղերից ստանյակ ու հարյուր կիլոմետր անցնելով քաղցած ու տանջված բանվորները հասնում էին Քիֆլիս, որպեսզի պարզեին ու կապալառուից կամ շինարարության Վարչությունից վերջապես ստանային իրենց մի քանի ամսվա

¹ Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 31, գ. 181, թ. 12—14:

վաստակած փողը: Լոռվա շրջանի հարյուրավոր բանվոր-
ների Թիֆլիս կատարած մի այդպիսի երթի մասին հա-
ղորդում է Կ-ն 1896 թվականի մարտին «Новое Обо-
зрение» թերթում¹: Նման դեպքերի մասին կան հաղոր-
դումներ նաև այլ թերթերում: Բանվորների այդ մասսա-
յական երթերը ըստ էության բողոքի ցույցերի բնույթ
էին ստանում և ուղղվում էին իշխանությունների դեմ:

Բայց բանվորական պայքարը միայն նման երթերով
կամ բողոքներով չէր սահմանափակվում: Բանվորները
մի շարք տեղերում և մի շարք անգամներ դուրս են եկել
իրենց կեղեքիչների դեմ հրապարակային պայքարի,
թողել են աշխատանքը, ըմբոստ ցույցեր են սարքել,
քարերով ու մահակներով զինված հարձակվել կապալա-
ռուների և շինարարության տեղամասային գրասենյակ-
ների վրա, ուժով ստիպել՝ կապալառուներին իրենց
վերջնահաշիվը կատարել, վճարել աշխատավարձը:

Բանվորական այդպիսի հուզումներ տեղի ունե-
ցան 1896 թվականի ապրիլին երկաթուղու շինարա-
րության Ախթալայի տեղամասում: Այդ հուզումների
մասին տեղեկանում ենք Կովկասի քաղաքացիական
մասի կառավարչապետին ուղղված Թիֆլիսի նահանգա-
պետի ղեկուցագրից:

1896 թվականի ապրիլի 8-ին, — հաղորդում է Թիֆ-
լիսի նահանգապետը, — 200 բանվորներ՝ դժգոհ այն բա-
նից, որ երկար ժամանակ իրենց աշխատավարձը ուշա-
ցել էր, ներկայանում են կապալառու Բելոբորոդովի
գրասենյակը, Ախթալայի գործարանում և պահանջում
անմիջապես վճարել կատարված աշխատանքի համար
հասանելիք փողը: Երբ Բելոբորոդովը պատճառաբանում

¹ Տե՛ս «Новое Обозрение», 29 մարտի, 1896:»

է, որ ինքը փող չի ստացել Թիֆլիսից, բանվորները ներս են մտնում գրասենյակ, առաջարկում նրան իրենց հետ միասին դնալ Թիֆլիս հաշիվները փակելու Բանվորների այս ելույթի մասին Թիֆլիս—Կարս երկաթուղու կառուցման աշխատանքների պետի օգնականը անհապաղ տեղեկացնում է Բորչալուի դավառապետին, որպեսզի նա «միջոցներ ձեռք առնի անկարգությունների վերջ տալու համար»¹: Ինչպես տեսնում ենք կառուցման պետի օգնականը բանվորների արդարացի պահանջը համարում է «անկարգություն»:

Գավառապետի կարգադրութեամբ խսկույն Ախթալա է հասնում Բորչալուի ոստիկանական պրիստավը ժանդարմների հետ և, ինչպես գրում է նահանգապետը, «ոստիկանական միջոցներով կարգը վերականգնվում է»:

Բանվորների նոր ելույթից վախենալով կապալառուն սկսում է նրանց մի մասի աշխատավարձը վճարել: Պրիստավը շորթորդ օրը վերադառնում է Շուլավեր (գավառային կենտրոնը) Ախթալայում թողնելով ուրյադնիկին՝ երեք ղինվորների հետ: Բայց շուտով բանվորներին հայտնի է դառնում, որ ոչ բոլորն են ստանալու աշխատավարձը: Ապրիլի 15-ին նրանք, 400 հոգով, նորից հավաքվում են կապալառուի գրասենյակի առաջ և պահանջում անմիջապես փակել բոլորի հաշիվները: Կապալառուն և գրասենյակը պաշտպանող ժանդարմները բանվորներին առաջարկում են հեռանալ, խոստանալով, որ փողը կվճարեն մի քանի օրից հետո: Բայց բանվորները, որ բազմիցս լսել էին այդպիսի խոստումներ, այլևս դրանց չէին հավատում և դայրույթով լցված

¹ Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 39, գ. 126 (Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարութեանում բանվորական հուզումների մասին)՝ թ. 1:

սկսում են ջարդել գրասենյակի դռների ու լուսամուտ-
ների ասյակիները, ձգտում գրասենյակ մտնել: Սկսվում
է ուժեղ գոտեմարտ բանվորների ու ժանդարմների միջև:
Ժանդարմները նույնիսկ սկսում են կրակել օդում, իսկ
նրանցից մեկը մերկացնում է սուրբը: Սա ավելի է բոր-
բորում բանվորական մասսայի զայրույթը և նա հուժկու
պրոհով դեն է շարտում ժանդարմներին, ղինաթափ ա-
նում և փախուստի մատնում նրանց: Բանվորների դեմ
անհասպաղ նետվում են ժանդարմական լրացուցիչ ուժեր:
ձերբակալվում են և դատի են տրվում 8 մարդ: Մի շարք
ակտիվ բանվորների հաջողվում է ֆաքսվել ոստիկանու-
թյունից:

Չնայած Ախթալայի բանվորների դեմ ձեռնարկված
ոստիկանական ռեպրեսիաներին, այդ ելույթը սթափեց-
րեց շատ բանվորների, մարտական ոգի ներշնչեց նրանց:
Դա ահեղ նախադրուշացում հանդիսացավ նաև կապա-
լառուներին, երկաթուղային շինովներին ու տեղական
իշխանությունների համար, որ իրենց դեմ կանգնած
բաղմազ ու բաղմալիզու բանվորական մասսան երկրի
հեռավոր ծայրամասում էլ ընդունակ է կուլիլու իր շա-
հերի համար: Այդ ելույթը այնուամենայնիվ, ահաբեկեց
և հարկադրեց կապալառուներին անհասպաղ վճարել բան-
վորների աշխատավարձը:

Ախթալայի տեղամասի բանվորների ելույթի նախա-
ձեռնողներն ու ղեկավարները, ինչպես հաղորդում էր
Թիֆլիսի նահանգապետը, եղել են Քութայիսի նահանգի
Ռաչայի գավառի հոթելի պուղի բնակիչներ Անտոն Դոխ-
նաձեն և Բիշիա Գուրգենիձեն, Նիկոլ—Իրմինդ գյու-
ղացի Իլարիոն Գեզիշիձեն և Նրիստաֆոր Գուրգենիձեն,
Գոգոլետի գյուղի բնակիչ Բեսո Սոխիձեն, Չիխանչիլի
գյուղի բնակիչ Նեստոր Զելիձեն, Սեկտար գյուղի բնակիչ

Գիրասիմ Մեման:աշվիլին, Սոչինո գյուղի բնակիչ Իվան Կվերնաձին, Թիֆլիսի գավառի Բոշվի գյուղի բնակիչ Նգոր Արշակունին, Ղաղախի գավառի Կոլբ գյուղի բնակիչներ՝ Դարթյանց Ավետիքը, Միսկարով Զախարը, Աղատով Օհանեսը, Դարշիլյանց Ակոպը, Ղուլիջանով Կարապետը, Խոջակ Սերգոն, Աղաբաբով Կարապետը, Աբովյան Անդրիասը, Ղուլիջանով Գիգոլը, Կոթիքյանգ գյուղի բնակիչ՝ Արուսին Փարսադանովը, Ղալաչա գյուղի բնակիչ՝ Ավետիք Ասկյարովը, Իշխի գյուղի բնակիչ՝ Գիգոլ Իսակը, Ճոճկան գյուղի բնակիչ՝ Ստեփան Ալավերդովը:

«Այս մասին տեղեկացնելով Ձերդ բարձր գերազանցութեանը, — գրում էր Թիֆլիսի նահանգապետը Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին, — պատիվ ունեմ ծանուցելու, որ ոստիկանութեան հետաքննութեան արձանագրութեանը և ձերբակալված մեղադրյալները՝ Կարապետ Ղուլիջանովը, Սերգեյ Խոջակը, Անդրեաս Աբովյանցը, Գիգոլ Ղուլիջանովը, Օհանես Աղատովը, Բագրատ Նասիրովը, Գալուստ Զալալովը և Սիմոն Հախավերդովը հանձնված են Շուլավերի հաշտարար շրջանի քննիչին նախնական քննութեանը կատարելու մյուս թաքնված մեղադրյալներին բռնելու համար միջոցներ են ձեռք առնված, ինչպես և հաղորդված է դատախազական հսկողութեանը և որ Ախթալա կայարանում, վերը նկարագրված անկարգութեաններից հետո, բանվորների մեջ լրիվ հանգստութեան է հաստատված և անկարգութեանների հնարավոր կրկնութեանից խուսափելու համար, մինչև բանվորներին վճարելու գործի ավարտումը, ոստիկանական սլոխատավը թողնված է տեղում»¹:

¹ Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 39, գ. 126, թ. 3—4.

Բնական է, եր ոստիկանական ուժերի միջոցով բան-
վորական հուզումների, կամ շինուլնիկների տերմինով
ասած «անկարգությունների» «հնարավոր կրկնությու-
նից» խուսափելու վերաբերյալ Թիֆլիսի նահանգապետի
հուշսերը չարգարացան և շէին կարող արդարանալ:

Ախթալայի բանվորների ելույթը անարձագանք չը-
ժնաց: 1896 թվականի օգոստոսի 11-ին բանվորական
հուզումներ եղան 3-րդ տեղամասում, կապալառու Ֆոն-
տանի մետ: Իսկ 1896 թվականի դեկտեմբերի սկզբին,
աշխատավարձը չստանալու նույն դրդապատճառով,
բանվորական նոր, ավելի խոշոր հուզումներ բռնկեցին
այս անգամ կողմա պրիտտավության և Ալեքսանդրա-
պոլի գավառի սահմանագլխում, Մեծ Ղարաքիլիսայից
(Կիրովական) 12 վերստ հեռավորության վրա գտնվող
Ջամալուի շինարարական մասում: Հուզումները վերջա-
ցան ոստիկանության և կողակների հետ բանվորների
ընդհարումով, որի ժամանակ վիրավորվեցին 3 բան-
վոր:

Բանվորական այս հուզումների մասին կա մի շարք
վկանների հարցաքննության արձանագրությունը, որ
կազմել է 1896 թվականի դեկտեմբերի լույս 7-ի գիշերը
Ալեքսանդրապոլի գավառի առաջին տեղամասի պրիտ-
տավր: Դրանց են վերաբերում նաև Ալեքսանդրապոլի
գավառապետի դեկուցագիրը Երևանի նահանգապետին,
Երևանի նահանգապետի հեռագիրը Կովկասի կառավար-
չապետին, փոխգնդապետ Ռսրուկի հեռագիրը ժանդարմ-
ների շեֆի օգնականին, Ոստիկանական դեպարտամեն-
տին և Կովկասի կառավարչապետին:

Պետք է նկատի ունենալ, որ պրիտտավի կողմից

1 Հայկական ՍՍԹ ԿՊՊԱ, ֆ. 270, գ. 4, թ. 287:

կազմված արձանագրութիւնը չի տալիս բանվորական հուզումների ամբողջական և ճիշտ պատկերը, որովհետև դեպքերի ականատեսներից հարցաքննված են միայն փանդարմները, կապալառուն և նրա աշխատակիցները: Բանվորները, որոնք կարող էին ճշմարտութիւնը լրիւ պատմել, չեն հարցաքննված: Բնական է, որ կապալառուն, տեղամասի պետը, տեղի ոստիկանը և մյուս ծառայողները կաշխատելին ամեն կերպ թաքցնել ճշմարտութիւնը, հուզումների համար պատասխանատուութիւնը հեռացնել իրենցից: Այդ պատճառով էլ նրանք իշխանութիւններին բանվորների հուզումների մասին հայտնում են միայն այն ժամանակ, երբ արդեն նրանց հետ փակել էին հաշիվները և հեռացրել տեղամասից: Այս հանգամանքը նկատել էր Ալեքսանդրապոլի գավառապետը և, իրեն արդարացնելու համար, հարկադրված էր հաղորդել Երևանի նահանգապետին, որ իրոք երկաթուղու շինարարութեան ղեկավարները և տեղի ոստիկանը թաքցրել են իրենց իսկական եղելութիւնը, որ նրանք դիտավորյալ կերպով հուզումների մասին իրեն հայտնել են այն բանից հետո միայն, երբ բանվորներն արդեն հեռացված են եղել և նրանց հարցաքննելն անհնարին էր:

Երկաթուղու վարչութեան ներկայացուցիչները գործը ներկայացնում են այնպես, որ ընդհարման մեղավորը բանվորներն են և նրանց դեմ զենքի գործադրումը բխել է իբր թե ինժեներներին պաշտպանելու անհրաժեշտութիւնից:

Դեպքի մասին ճշմարտութեանն ավելի մոտ բացատրութիւն է տալիս Ալեքսանդրապոլի գավառապետը: Գավառապետի ղեկուցագրից և պրիստաւի արձանագրութիւնից պարզվում է, որ խտալադի կապալառու Դեմոստի բանվորները, թվով մի քանի հարյուր մարդ,

օգոստոսից սկսած աշխատավարձ չէին ստացել: Նրանց քաղամայրիվ ղիմումները չորս ամիս շարունակ անուշադրութեան է մատնված եղել: Յրտեքը վրա հասնելու կապակցութեամբ, երբ բանվորական կարիքն ավելի է մեծանում, դժգոհութիւնը գնալով սաստկանում է և նրանց պահանջներն ավելի կտրուկ են դառնում: 1896 թվականի դեկտեմբերի 1-ին, բանվորների մի քանի արտելներ, մեծ մասամբ Թուրքիայից եկած քարտաշներ, տեղեկանալով, որ կապալառուն այդ օրը ևս նրանց հաշիվները չի փակում, ըմբոստանում են: Հետևյալ օրը տեղի է ունենում բանվորների և կապալառուին պաշտպանելու համար Զամալու եկած խուպրեյա գեղի մի քանի կողակների միջև առաջին ընդհարումը: Բանվորներին հաջողվում է փախուստի մատնել ղիմումներին, բէլ իրենց բարակը: Դեկտեմբերի 3-ին պարզվում է, որ կապալառու Դեմոսսին հեռացել է Զամալուից: Այդ իմանալով բանվորներն ավելի են բորբոքվում: Նրանք սկսում են քարերով ջարդել կապալառուի գրասենյակի լուսամուտների ասպակիները: Դեմոսսիի աշխատակիցները և տեղի ոստիկանը սկսում են համոզել բանվորներին, որ դեկտեմբերի 5-ին գալու է տեղամասի պետ ինժեներ Յակչիչը և նրանց հետ վերջնահաշիվ է կատարելու: Հավատալով այդ խոստումներին բանվորները որոշ չափով հանգստանում են, բայց շեն ցրվում: Ամբողջ գիշերը նրանք գրասենյակի առաջ սպասում են դեկտեմբերի 5-ի լուսարացին, այն հույսով, որ տեղամասի պետը կդա և իրենց համար փող կրերի:

Դեկտեմբերի 5-ին իրոք գալիս է տեղամասի պետը տեղամասի ինժեներ Գերերի հետ: Նրանց շրջապատում են 300 բանվորներ: Բայց Յակչիչը հայտարարում է, որ կապալառու Դեմոսսին փող չունի և որ պետք է մի 6 օր

էլ սպասել, մինչև զուցե ստացվի: Այդ հայտարարութիւնը բանվորներին մեջ առաջացնում է շտեմնված ցասում: Նրանք հասկանում են, որ այս անգամ էլ իրենք խաբված են: Թե ինչ աստիճանի է հասնում բանվորների զայրույթը և ինչպես է այն արտահայտվում, այդ մասին հետեյալն ենք կարդում Ալեքսանդրապոլի գալառասպետի ղեկուցապրում:

«...Պետք էր տեսնել, թե ինչ պրոբլեմայն մեջ էին բանվորները, երբ ինժեներ Յակշիչը նրանց հույսերը շարժաքայնելով՝ իրեն շրջապատող արտելներին ասում է, թե նրանք վերջնահաշիվ կստանան մի շաբաթից: Բանվորների ամբոխն այս պատասխանը լսելով, շեշտակի դիմում է դեպի այն շենքը, ուր այս անգամ գտնվում էր գրասենյակը և նոբից սկսում է քարերով ջարդել ապակիները: Այդ շենքի պատշգամբում են գտնվում խոպրչան գնդից 8 հոգի կողակներ, կապալառու Գեմոսսիի պահակը՝ Դուդարովը, իսկ ժանդարմ Ալեքսեյենկոն մնում է պատշգամբի առաջ՝ համոզելու ամբոխին վերջ տալու անկարգութիւններին: Բայց հանկարծ նրա ուսի վրայով լսվում է հրացանի կրակոց, որից հետո ամբոխը ետ է քաշվում, իսկ երեք հոգի մնում են գետնին վիրաւոր: Գաղաղած ամբոխը տեսնելով, որ ինժեներ Յակշիչը և Գերերը փախչում են դեպքի վայրից, հասնում են նրանց և առանց բռնութիւն գործադրելու, տանում են այնտեղ, ուր մնացել են վիրավորները, խնդրելով իրենց հանձնել մեղավորին»¹:

Պարզվում է, որ բանվորների վրա կրակոցը կապալառու Գեմոսսիի պահակն է կռել: Ըստ փոխգնդապետ

¹ Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 39, գ. 126, թ. 17:

Ռորուկի հեռագրի՝ պահակը կրակել է բանվորների վրա կապալառուի կարգադրությամբ¹ :

Բանվորները պահանջում են իրենց հանձնել պահակին, բայց զինվորներն ու ժանդարմը փախցնում են նրան և ձերբակալելու անվան տակ ազատում բանվորների պատժող ձեռքից :

Բանվորների ելույթը ճնշելու համար տեղամասի պետը զինվորական լրացուցիչ ուժեր է պահանջում :

Բանվորները ծայրահեղորեն զայրացած սկսում են շարժվել դեպի Ղարաքիլիսա, որպեսզի այնտեղ քարուքանդ անեն տեղամասի գրասենյակի շենքը, և այսպիսով վրեժ լուծեն իրենց հարստահարիչներից : Զորքով և ոստիկանությամբ ուժեղացվում է նաև Ղարաքիլիսան :

Բանվորների սաստկացող ցասումից և հետագա բարդություններից վախեցած, երկաթուղու շինարարության տեղամասի ղեկավարները բանվորներին համոզում են և կես ճանապարհից ետ դարձնում կրկին Զամալու, արագորեն նրանց հետ վերջահաշիվ կատարում և ապա ուղարկում բոլորին իրենց հայրենիքը՝ Թուրքիա :

Այսպիսով «ոստիկանական միջամտությամբ» գծի վրա նորից վերահաստատվում է «խաղաղություն» :

Զամալուի մոտ բանվորների ելույթը, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, մեծ տագնապ էր առաջ բերել ոստիկանության և տեղական իշխանությունների շրջանում : Այդ շարժման ժամանակ երկաթուղու շինարարության բանվորները տվին առաջին զոհերը : Այնուամենայնիվ նրանք հարկադրեցին, շնայած ծանր գնով, բավարարել իրենց արդարացի պահանջը :

1897 թվականի հոկտեմբեր ամսին բանվորական

¹ Վրացական ՍՍԻ ԿՊՊԱ, ֆ. 39, գ. 126, թ. 17.

նոր, խոշոր հուլումներ եղան այս անգամ արդեն 5-րդ տեղամասում, Կարս քաղաքում:

Այստեղ ևս բանվորները երկար ժամանակ առանց վարձատրութեան աշխատելով, բողոքում են Կարսի զինվորական նահանգապետին, ապա Կովկասի կառավարչապետին:

Բայց, ինչպես սովորաբար լինում էր, այդ բողոքները մնում էին անհետևանք:

Հոկտեմբերի սկզբին բանվորների դժգոհութիւնը արտահայտվում է բուն ցույցերով: Թողնելով աշխատանքը նրանք ոչադշիկներից կտրուկ պահանջում են վերջնահաշիվ կատարել: Բանվորների զայրույթից վախեցած ոչադշիկները փախչում են Կարսից՝ առանց բանվորներին վճարելու: Հոկտեմբերի 24-ին մոտ 250 բանվորներ հավաքվում են շինարարութեան տեղամասի գրասենյակի բակը և պահանջում տեղամասի պետից, որ վարչութիւնը վճարի իրենց կատարած աշխատանքի վարձը: Տեղամասի պետը Կարսի զինվորական նահանգապետից շտապ ուստիկանական ուժեր է պահանջում ըմբոստացած բանվորների դեմ: Փանդարմների հետ անհապաղ դեպքի վայրն են գալիս ուստիկանապետը և պրիստավը: Ուստիկանապետը առաջարկում է բանվորներին ցրվել, հայտարարելով, որ նրանց գործողութիւնները իբր հակաօրինական են, որովհետև բանվորներին վարձել են ոչադշիկները և ոչ թե գրասենյակի պետը, ուստի նրանք պիտի ոչադշիկներից պահանջեն իրենց աշխատավարձը, դիմեն դատարան և այլն: Ուստիկանապետի այդ հորդորները իհարկե բանվորներին չեն համոզում: Նրանք պնդում են իրենց պահանջների վրա: Բանվորների պարագլուխներից մեկը առաջ գալով ուղղակի հայտարարում է, որ ինչպես ինքը, այնպես էլ բոլորը

տեղամասի գրասենյակից անհայադ պահանջում են վերջնահաշիվ կատարել: Ոստիկանապետը կարգադրում է ձերբակալել նրան: Այդ ժամանակ բանվորների ամբողջ մասսան միահամուռ կերպով հարձակվելով փորձում է ժանդարմների ձեռքից ազատել իրենց ձերբակալված ընկերոջը:

Ոստիկանապետի հրամանով ժանդարմները մերկացնում են սրերը և սկսում ցրել բանվորներին: Եվ միայն այն բանից հետո, երբ ձերբակալվում են մի քանի բանվորներ ևս և ոստիկանատուն տարվում, մասսան հարկադրված է լինում ցրվել¹:

